խատ կոլոտ[1]) կնիկ կ'ուզը, տանը էրկանք աղան, քեառսուն աղաբ աղջիկ կուզը արմաղան[2]), քեառսուն յերկէն կնիկ կուզը՝ ուղտ բառնան*)։

Էսաց.—Պա՛ռաւ, էդա բանիր ո՞րտեղն ի, ընձի շանք տու։

Էսաց.—Գեոյ ձե տան կուշտ խարաբայ[3]) մարաք[4]) ըմ կայ, էսաց, կինքտիր, աղջկնիր ժողվի, էրի էնդեղ. ոսկին էլ խրօխպէր գեոյ մաղազէն կ'չափը։

Դաւիթ էսաց.—Պա՛ռաւ, էրթանք շանք տու։

Էսաց.—Կինա՛, գեոյ կ'տեսնաս։

Էլաւ, կինաց էնդեղ, տեսաւ խրօխպէր ըզոսկին կ'չափը։ Էկողնիր վո՞ւմ ի,—մէկ Բադին, մէկ Կոզբադին, մէկ Սիւդին, մէկն էլ Զարխադին ը. կանգնած ին, Զէնով-Ցեովան կ'չափը. շատ նեղացեր էր, բրտներ էր։

Դաւիթ էնդեխէն կանչից.—Խրօխպէր, էսաց, վեր իլի, իս կ'չափիմ։

Խրօխպէր էլաւ, զկոտ իտու Դաւթը ձեռ։ Դաւիթ առից զկոտ, գեործից, չուրս ոսկի էթըլ վեար վըռուն, փէտ իտու, իցկից, տարտակ կոտ էթալ ջըվալ, էսաց.—Մէկ։

Մէկ, էրկու, իրիք անցկուն էրաւ, Բադին ըռըկաւ.—Էդ ի՞նչ կ'էնիս։

---

[1]) Կարճ։ [2]) Գեղեցիկ։ [3]) Աւերակ։ [4]) Ցարդանոց։

*) Ա. վարիանտով Մսրամելիք լսելով՝ որ Դաւիթ գրաւել է Սև սարը, նորոգել է Մարութան, նախանձից թշնամանում է Դաւթի հետ և մօր կամքին հակառակ ուղարկում է Կուզբադնուն և մի փաշայի, եօթ տարուան հարկ պահանջելու։ Կուզբադին ասում է.

«Կ'առնիմ քեառսուն աղաբ ախչիկ արմաղան,
Քեառսուն կարճ կնիկ՝ էրկանք աղան,
Քեառսուն էրկէն կնիկ՝ դաւա բառնան,
Կուտերով ոսկի կ'զատիմ օխտ տարուան խարջ,
Սասում երերում տը բերիմ թալան»։

Բ. վարիանտով Կուզբադնի տեղ Քեոսէն է գալիս։